

«*Գրանցված է*»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
1 հունիսի 2004 թ.  
Պետական գրանցման թիվ 10204135

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

24 մայիսի 2004 թ.  
ք. Երևան

N 70-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

### ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՈՐՊԵՍ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՐԴՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի,

#### *Հրամայում եմ*

Հաստատել հարկադիր կատարման ծառայությունում առաջին անգամ որպես հարկադիր  
կատարողի պաշտոնի նշանակվող անձանց երդման կարգը՝ համաձայն հավելվածի:

**Դ. Հարությունյան**

Հավելված

*Հաստատված է՝*

*ՀՀ արդարադատության նախարարի  
24 մայիսի 2004 թ. թիվ 70-Ն հրամանով*

#### Կ Ա Ր Գ

### ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՈՐՊԵՍ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՐԴՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող  
ծառայությունում առաջին անգամ որպես հարկադիր կատարող պաշտոնի նշանակվող անձանց  
երդման ընթացակարգը:

2. Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում ծառայության  
անցնող յուրաքանչյուր անձ երդում է տալիս անհատապես և այն հաստատում անձնական  
ստորագրությամբ:

3. Հարկադիր կատարման ծառայությունում երդում տալիս են՝

ա) հարկադիր կատարման ծառայությունում առաջին անգամ պաշտոնի նշանակվողը՝ ծառայության վայր ներկայանալուց 1 ամսվա ընթացքում,

բ) երդումը տրվում է մեկ անգամ, այն չի կրկնվում հետագայում (ծառայության վայրը փոխելիս, աշխատանքում վերականգնվելիս, կրկին անգամ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում պաշտոնի նշանակվելիս):

4. Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող վարչությունում երդում տվողների հետ, մինչև երդման արարողության օրը, տարվում է բացատրական աշխատանք, որի ընթացքում պարզաբանվում են երդման նշանակությունը, հարկադիր կատարման ծառայության առանձնահատկություններն ու «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված երդման տեքստի բովանդակությունը և հայտարարվում է երդման արարողության ժամը:

5. Նշված ժամին ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը կամ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձը, հարկադիր կատարման ծառայության նշանակության, խնդիրների և պարտականությունների մասին ներածական խոսքից հետո հայտարարում է երդման արարողությունը սկսելու մասին:

6. Երդման արարողությունը սկսվում է հանդիսավոր պայմաններում, Հայաստանի Հանրապետության պետական դրոշի առջև, Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության համապատասխան բաժնի ղեկավարության մասնակցությամբ:

7. Երդում տվողները հերթականությամբ հրավիրվում են, նրանցից յուրաքանչյուրը բարձրաձայն ընթերցում է օրենքով սահմանված երդման տեքստը և ստորագրում իր ազգանվան դիմաց: Այնուհետև դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ղեկավարը շնորհավորում է հարկադիր կատարողներին երդում տալու համար, որից հետո հնչեցվում է Հայաստանի Հանրապետության օրհներգը:

8. Հարկադիր կատարողի կողմից ստորագրված երդման ձևաթուղթը (ձևը կցվում է) հետագայում կադրերի բաժնի կողմից կցվում է նրա անձնական գործին:

9. Երդման արարողությունն անցկացվում է ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի կողմից սահմանված վայրում:

21



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

**Ե Ր Դ ՈՒ Մ**

Է \_\_\_\_\_  
ս \_\_\_\_\_

*անուն*

*հայրանուն*

*ազգանուն*

Հայաստանի Հանրապետության դատական ակտերի հարկադիր կատարման  
ծառայությունում պաշտոն ստանձնելով՝ երդվում եմ.

հավատարմորեն ծառայել Հայաստանի Հանրապետության Ժողովրդին, խստագույնս  
պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, մարդու և  
քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, աջակցել սահմանադրական կարգի  
պահպանմանը, անվերապահորեն և բարեխղճորեն կատարել իմ պարտականությունները:

\_\_\_\_\_

*ստորագրություն*

\_\_\_\_\_

\_\_\_\_\_ 200 թ.